


րովհէլ իր սգաւոր զաւակներուն արցունքներուն մէջ, չէինք սպասեր որ Փարիզի հայութիւնը այնքան հեռու մնար այս պատուարներ Հայուն արժանի յարգանք ընծայելու իր մահուան շնորհիւ առջեւ. այնուհանդերձ Կարապետ Աղամեան կը մնայ մեր եւ միջազգային նկարչութեան մէջ սիրելի եւ անմոռանալի դէմք մը:



ՀԱՅԿ ԵՐԶՆՆԿԱՑԵԱՆ

1943 Յունիս 4ին Ատտիս-Ապեպայի մէջ աւազակներու յարձակումի մը զոհ կ'երթայ խոստովանալից երիտասարդ՝ Հայկ Երզնկացեան, վերջին յոյսը եղբարարիտ ծնողքին:

Երզնկացեան իր բարեհամբոյր բնաւորութեամբ եւ մանաւանդ իր տաղանդին շնորհիւ մեծ համակրանք ու սէր կը վայելէր ոչ միայն Հայ համայնքին՝ այլ եւ

օտարներէն՝ ու պետական ներկայացուցիչներէն:

Ինքնաբոյս տաղանդ մ'էր այդ հեռաւոր ամբիկեան անկիւնը, նուիրուած բոլորովին նկարչութեան եւ իր աշխատանքով յառաջացած մուսաններու շնորհքին մէջ:

Վայրենի երեւակայութեամբ օժտուած՝ կը սիրէր նկարել այն ինչ որ փայլակի ազդեցութիւն կ'ընէ տեսողին վրայ: Իր նախասիրած նիւթերն էին Հաշիշամուներ, Հապէշներ, Կեանքի արիւնոտ պայքարներ, Մահուան տեսիլներ, Կենդանիներու արշաւաւթներ, Պառաւ վիռկներ: Ուժեղ են իր վրձինի հարուածները, անխոհեմ յանդգնութեան հասնելու աստիճան. կը սիրէր իր պատառներուն վրայ երանդներու ալիքներ յօրինել որ կարենային ճշգրտորէն պատկերացնել իր ընտրած նիւթերը:

Հակառակ որ մեղմ էր բնաւորութեամբ, բայց իր սրտին մէջ երիտասարդական խանդը վառ էր քաղցր փոթորկալից. ինքը չէ խնայած ամբողջ զգացումները հարազատօրէն ներկայացնել իր դիտողներուն. ուղեր է ըսել ինչ որ թաղուն կար սրտին մէջ խանդավառ պարզմտութեամբ:

Թէպէտ տկար էր անդամազննութեան մէջ, սակայն գոյներու ներդաշնակութեամբ, եւ մանաւանդ կիսալոյսերու եւ ստուերներու գեղեցիկ հակադրութիւններով կը ստանայ այնպիսի արդիւնքներ՝ որոնք որոշակի ցոյց կու տան թէ այս տարաբախտ երիտասարդը արժանի էր երկար ապրելու՝ լաւագոյն յաղթանակներ տանելու համար:

Ատտիս-Ապեպայի պայմանները թոյլ չեն տուած որ Երզնկացեան կարենար զեղարուեստի հետեւիլ վարպետի մը քով: Ծամբորդած է Եւրոպա՝ քիչ ժամանակի համար եւ հազիւ կրցած է տեսնել եւ ուսումնասիրել Լուվրի հրաշակերտները՝ որոնք անելի իր խանդը բորբոքած են քան



ՀԱՅԿ ԵՐԶՆՆԿԱՑԵԱՆ. Կեանքի պայքարը

Թէ դպրոցի մը դերը կատարած: Բայց նա անխոնջ աշխատող մ'էր, եւ մտած արդէն վերելքի ճամբուն մէջ, ստեղծելով իր անձնականութեամբ տեղական գոյնով գործեր՝

Զ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆԻՆ

Ձիւնասպիտակ աղանի
Կը թռչնորիս մէջըս յար,
Երազներուս անկամար
Ծաղկաշխարհին մէջ յուռթի
Կ'արձագանդես անդադար:
Սարսուռներու մէջ ճերմակ,
Ես դէմ առ դէմ քեզի հետ
Լուսատարած էջերէդ
Յագուրդ կու տամ իմ անյադ
Խոր ծարաւին խընկաւէտ:
Ծաղկառայլիդ մէջ ծըփուն,
Քու լուսաշող ապրումին
Աստեղաշար ու անդին
Բոցերուն տակը նըկուն՝
Կը մոխրանամ կը հալիմ:

Ու այդպիսով ալքերու
Բոցերգութեան պէս աղուոր՝
Կը ծընի սէր մը անլուր
Աղօթասաց քուրմերու
Պէս ծընրադրել քեզ համար:
Անմար կանթեղ Վարուժան
Յիսուսի պէս կարճ կեանքով,
Չարչարանքի անյայտ ծով
Բայց արժանի յարութեան
Յիշատակիդ խարոյկով:
Մաղդաղինէն թող ըլլամ
Խաչելութեանդ առջեւ,
Ու իմ մըտքիս հոլաթեւ
Նախըզացման հաւատամ
«Վերապրումիդ» Հայ Արեւ:

ՆԱԶԵՆԻ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ